ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունիսի 2014 թվականի N 84– Ա

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով մեծանուն գյումրեցի բանաստեղծ Հովհաննես Շիրազի հարյուրամյա հոբելյանին նվիրված միջոցառումները պատշաճ մակարդակով կազմակերպելու և անցկացնելու անհրաժեշտությունից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.2014 թվականին Հովհաննես Շիրազի հարյուրամյա հոբելյանը նշելու հետ կապված մշակութային միջոցառումների ծախսերն իրականացնել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեով մշակութային միջոցառումների իրականացման համար նախատեսված հատկացումների հաշվին 17.015.000 (տասնյոթ միլիոն տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել, որ սույն որոշման 1-ին կետով հատկացված գումարի շրջանակներում ապրանքների և ծառայությունների ձեռքբերումն իրականացվի «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին՝ ծախսերը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) «այլ ընթացիկ ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (16) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____